ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ագրարային ոլորտի զարգացման բաժնի գործունեությունը եւ հեռանկարները

Աշոտ Հ. ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ագրարային ոլորտի զարգացման բաժնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Դեռեւս 2006թ. ՀՀ-ում տնտեսագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների գծով բարեփոխումների արդյունքում նորովի հիմունքներով ձեւավորվեց ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտը (տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Լ. Հարությունյան), որի ղեկավարման տարիներին 11 տարի գործում է Ագրարային ոլորտի զարգացման բաժինը (2006-2011թթ. ընթացքում տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Ղազարյանի, այնուհետ՝ 2012թ-ից մինչ այժմ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Բայադյանի ղեկավարությամբ):

Վերոնշյալ բաժինը 2006-2016թթ.-ի ընթացքում զբաղվել է հետեւյալ գիտահետազոտական թեմաների ուսումնասիրությամբ եւ կատարմամբ, այդ թվում՝

- ՀՀ գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը եւ մասնագիտացումը ՀՀ մարզերում
- ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները
- Փոխ եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում
- ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները եւ դրանց լուծման ուղիները
- ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների եւ տնտեսվարման ձեւերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները
- Ֆինանսական միջոցների կազմավորման եւ օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում
- Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսա-տնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը եւ դրանց լուծման ուղիները ՀՀ-ում

Կատարված թեմաներով պայմանավորված լույս են ընծայվել գիտական աշխատություններ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի համահունչ՝ 2017թ.-ին բաժինը կատարում է «ՀՀ տնտեսության կայուն աճի աղահովման հիմնախնդիրները եւ լուծման ուղիները» թեման:

2006-2016թթ. կատարված գիտահետազոտական աշխատանքների վերլուծության արդյունքները վկայում են գյուղացիական տնտեսություններում, վերամշակող արտադրական կազմակերպություններում արտադրության արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող պատճառների մասին՝ կատված ֆինանսական, հարկային, վարկային համակարգերում, ինչպես նաեւ օրենսդրության ոլորտում տեղ գտած թերությունների հետ եւ արդյունքում դժվար է դառնում խոսել գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ֆինանսավորման հասակ ու նպատակաուղղված խաղաղականության մասին: Մասնավորապես կատված՝ կարճաժամկետ վարկերի բարձր տոկոսադրույքների, միջին եւ երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայության, վարկերի դիմաց գրավադրման հետ կապված հիմնախնդիրների, վարկառու կազմակերպությունների դիմումների (բիզնես պլանների) առջեւ դրվող խիստ պահանջների, ինչպես նաեւ բիզնես պլանների ցածր որակի հետ:

Գյուղատնտեսության արդյունավետության աճին հիմնական ուշադրություն է դարձնում նաեւ Միաժամանակ ի հաշիվ բյուջետային, արտաբյուջետային, ինչպես նաեւ կոոպերատիվների արտադրաֆինանսական գործունեությունից գոյացած միջոցների, գործնական է դառնում գյուղացիական կոոպերատիվների աջակցության «Կենսոռնական հիմնադրամի» ստեղծումը: Ըստ որի էլ, ինչպես յուրաքանչյուր մարզում, այնպես էլ առանձին կոոպերատիվների սեփական միջոցների հաշվին անհրաժեշտ է կազմակերպել խոհրդատվական կենտրոններ՝ լայնորեն օգտագործելով համապարգի գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների եւ այլ ստորաբաժանումների գիտական ներուժը, ակնկալելով պայմանագրային հիմունքներով բիզնես ծրագրերի կազմում եւ զանազան ծառայությունների մատուցում: Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվների ընդլայնված

լավման համար կարեւոր է գրավադրման մեխանիզմների կատարելագործումը, պետության կողմից սուբսիդավորվող վարկերի տոկոսադույքի իջեցումը, մասնաբաժնի եւ վարկերի մարման ժամկետների ավելացումը: Ընդ որում սուբսիդավորման ընթացակներում տրամադրվող վարկերը պետ է ունենան հասցեականություն կոնկրետ ճյուղի զարգացման կամ արտադրանքի արտադրության գծով, իսկ տրամադրվող վարկերի գումարն էլ պետ է դարձնել երկարաժամկետ մինչեւ 10 տարի եւ նվազեցնել տոկոսադույքը՝ 2-3%-ի չափով:

Կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունները վկայում են այն մասին, որ ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան ուղիների իրագործումը հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ դարձնելու ագրարային ոլորտի գործունեությունը: Մասնավորապես, «Կառավարում, մոնիթորինգ եւ գնահատում» ծրագրի բաղադրիչով կֆինանսավորվեն խոհրդատուների պայմանագրեր, աուդիտորական գործունեության ծախսերը եւ դրանցով պայմանավորված կընդլայնվի համայնքների խոհրդատվական ծառայությունների մատուցումը, հասցնելով դրանց թիվը ընդհանուրում մինչեւ 90 տոկոսի:

Միաժամանակ ի հաշիվ բյուջետային, արտաբյուջետային, ինչպես նաեւ կոոպերատիվների արտադրաֆինանսական գործունեությունից գոյացած միջոցների, գործնական է դառնում գյուղացիական կոոպերատիվների աջակցության «Կենսոռնական հիմնադրամի» ստեղծումը: Ըստ որի էլ, ինչպես յուրաքանչյուր մարզում, այնպես էլ առանձին կոոպերատիվների սեփական միջոցների հաշվին անհրաժեշտ է կազմակերպել խոհրդատվական կենտրոններ՝ լայնորեն օգտագործելով համապարգի գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների եւ այլ ստորաբաժանումների գիտական ներուժը, ակնկալելով պայմանագրային հիմունքներով բիզնես ծրագրերի կազմում եւ զանազան ծառայությունների մատուցում: Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվների ընդլայնված գործունեության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել մարեթինգային ծառայություններ, որոնք հնարավորություն կստեղծեն ձեւավորելու պահանջարկի եւ առաջարկի համամասնություն: Այդպիսի ծառայությունների վերջնական նպատակը պետ է լինի՝ տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծել նպաստավոր պայմաններ, կողմնորոշվելու ընկաներում ելող իրավիճակին, ինչպես նաեւ հզորացնելու կապերը՝ ֆերմերների, ասոցիացիաների, կոոպերատիվների, ծառայություն մատուցողների, ագրովերամշակողների եւ մարքեթինգային գործակալների միջեւ: Միաժամանակ պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը եւ այլն տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձեւավորված մասնագիտացված կազմակերպություններին (կոոպերատիվներին), գյուղացիական եւ այլ տնտեսություններին՝ օբյեկտիվ եւ հավասարաչափ սպասարկման համար:

Իրողություն է, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն առանց հարմարավետ գյուղի: Հետեւաբար պետ է ուժեղացնել համայնքների տնտեսական զարգացման ծրագրերը, որոնք կօգնեն ընտրված համայնքներին պլանավորելու, ֆինանսավորելու եւ ղեկավարելու ներդրումների իրականացումը, նրանց հետագա նպատակայնությունն ու շարունակելիությունը: Անհրաժեշտ է պետական ռեսուրսների լայն օգտագործում՝ գյուղատնտեսական ենթակառուցվածքների պահպանման եւ հզորացման, դրանց համահունչ փոխառու ֆինանսական միջոցների մասնելիության ավելացման ու գյուղացիական տնտեսություններին բանկային եւ այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման համար: Հետեւաբար վերոնշյալ հարցադրումները կարեւոր են նաեւ այն իսկ պատճառով, որ գյուղատնտեսական խաղաղականությունը ենթադրում է ագրարային ոլորտի արտադրական գործընթացների վարման արդյունավետ մեթոդների, ժամանակակից ձեւերի ու եղանակների ներդրում եւ խթանում: Վերջիններիս իրագործման համար էլ անհրաժեշտ է գյուղական վայրերում ունենալ՝ կրթական, մասնագիտական պատրաստվածություն ունեցող զանգված:

Գյուղացիական տնտեսություններում իրականացված ուղղակի հաշվառման հիման վրա կատարված ծախսերի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ արտադրական գործընթացները տեղի են ունենում զգալի խախտումներով ու կազմակերպական ոչ ռացիոնալ սկզբունքներով, ինչն իր հերթին հանգեցնում է արտադրության արդյունավետության անկմանը: Մասնավորապես, շատ աշխատանքներ կատարվում են ձեռքի ուժով, երբ դրա համար կան մեքենաներ կամ սարքավորումներ, ցանքը կատարվում է ցածրորակ պատահական սերմնյութերով, չեն պահպանվում ցանկերի պատրաստման ու բույսերի պատպաննության միջոցառումների համակարգի կանոները, իսկ աշխատանքներն էլ կատարվում են ժամկետների խախտումներով: Գյուղացիական տնտեսությունները չեն վարում ծախսերի եւ եկամուտների հաշվառման ոչ մի փատաթուղթ: Կատարված աշխատանքների դիմաց գումարները հաճախ ներկայացվում են մոտավոր, հիմնվելով հիշողության վրա, եւ վերջնական արդյունքում, բնականաբար, մեծ հավանականությամբ, որոշ աշխատանքների վրա կատարված ծախսերն էլ մոռացվում են: Մինչդեռ ճիշտ հաշվառում կատարելու պարագայում գյուղացին բոլոր կարգի մուտքերից ու վճարումներից հետո կարող է պատկերացնել իր գործունեության վերջնական արդյունքը: Ուստի նման ձեռնտու է ունենալ ցուցանիշների մի այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա գնահատել ինչպես գործունեության առանձին կողմերը՝ կատված արտադրական գործընթացի տվյալ փուլում, այնպես էլ վերջնական արդյունքն, ամփոփ ձեւով:

Մրցունակ արտադրանք թողարկելու համար գոնե բոլոր գործառվեմշակող ընկերություններն ունեն վերազինման կարիք, իսկ դրան հասնելու համար սեփական միջոցների բացակայության պայմաններում պատարտված են իրականացնել վարկային ռեսուրսների հաշվին: Շրջանառու միջոցների համալրման համար սահմանափակ ժամկետով տրամադրված վարկերի սպասարկման ծախսերը զգալիորեն բարձրացնում են արտադրանքի ինքնարժեքը եւ վերջնական արդյունքում այն բացասաբար է անդրադառնում արտադրանքի մրցունակության վրա: Ոսկի վերամշակող արդյունաբերության մեջ շահութաբեր արտադրություն վարելու համար անհրաժեշտ է տրամադրվող վարկերի տոկոսադույքերի մասնակի սուբսիդավորման մեխանիզմների կիրառումը:

⇨12

Ռուբեն Հախվերդյանի բարեգործական համերգը Ֆրանկֆուրտում

ՀՀ բանակի ստեղծման 25-ամյակի կապակցությամբ հունվարի 28-ին Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում **Ռուբեն Հախվերդյանը** հանդես եկավ մենահամերգով: Մենահամերգում արվեստագետին նվագակցեցին թավջութակահար **Լեւոն Առաքելյանը** եւ ակորդեոնահար **Գեւորգ Մովսիսյանը**: Ելույթ ունենալու համար նրանց Շվեյցարիա էր հրավիրել «Ազատություն եւ հայրենիք հիմնադրամի» անդամ Առույակ Լուդի-Հայրապետյանը: Ցյուրիխ քաղաքում արվեստագետները ելույթ ունեցան ամսի 29-ին բարեգործական համերգով, որից ստացված հասույթը ուղղվելու է, կազմակերպիչների բնորոշմամբ, «քաղաքական գաղթականների» ընտանիքներին:

Համերգը Գերմանիայում կազմակերպել էին «Հէսսենի հայ մշակութային միությունը» եւ «Հայ ակադեմիականների միության-1860»-ը՝ միության անդամ Ալիս Սողոմոնյանի միջնորդությամբ:

«Լսեցինք, որ ուզում են բարեգործական համերգ տալ, որ հավաքված գումարը հաղթանդամներին օգնի: Ես այդ առիթից օգտվեցինք ու հրավիրեցինք նաեւ Գերմանիա, որ հախվերդյանական փիլիսոփայությունը փոխանցենք հասկանալու նոր սերնդին, ովքեր հեռու են հայրենիքից: 35-ից բարձր սերունդն էլ, ինչպես տեսաք, երգչին զուգահեռ երգում էր, այսինքն՝ դեռ պահում են նրա երգերով»,- մեզ հետ զրույցում նշեց «Հայ ակադեմիականների միության» նախագահ **Ազատ Օրդուխանյանը**:

Համերգն ունկնդրելու համար հանդիսասեւի մեծ մասը հայրենասեր կմ էր անցել՝ ամենատարբեր հաղթանդամներից: «Ռուբեն Հախվերդյանը Գերմանիայում ընդամենը մեկ համերգով, շատ քիչ է: Կազմակերպելու համար շատ ժամանակ չունեինք: Մենք դիմեցինք իհարկե Համբուրգի համայնքին էլ, Բեռլինին էլ, բայց չհատցվեց: Ռուբեն Հախվերդյանը յուրահատուկ հանդիսասեր է պահանջում եւ ավելի շատ ճանաչված ու սիրված է հայասանցիների շրջանում, իսկ այստեղ Գերմանիայում հայասանցիները ավելի շատ կենտրոնացված են Համբուրգ, Ֆրանկֆուրտ եւ Բեռլին հաղթանդամներում: Այս ամենի հիման վրա որոշեցինք Ֆրանկֆուրտը»,- պարզաբանեց Ազատ Օրդուխանյանը:

ԳԱՅԱՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գերմանիա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կարիճներն ապահովելու համար արգելափակիչ սյուներ ձեռբերելու նպատակով բաց ընթացակարգ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիճներն ապահովելու համար արգելափակիչ սյուներ ձեռբերելու նպատակով:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն, Կենտրոնական բանկ՝ f. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2017թ. Մարտի 14-ի ժամը 16:00 ,Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկե f. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը ևս է կայցելու ՀՀ կենտրոնական բանկում՝ f. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2017թ. Մարտի 14-ին ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2017թ. Մարտի 21-ին ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ f. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

VIVA CELL MTS

Տեղեկացնում ենք, որ 2017թ. փետրվարի 1-ից ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Super BIT 30» ծառայությունն արխիվացվելու է ու այլեւս հասանելի չի լինելու ակտիվացման համար:

Այն բաժանորդներն, ովքեր մինչեւ 2017թ. փետրվարի 1-ն ակտիվացրած կլինեն «Super BIT30» ծառայությունը, կշարունակեն օգտվել դրանից՝ մինչեւ ծառայության աղասակտիվացումը:

«Ա-Տելեկոմ» ՓԲԸ

«Նշանավոր մարդկանց դիվանագիտություն»

Վերաասահմանելով Հայաստանի դերը Սիլիկոնյան հովտում

Հունվարի 29-ին Հարավային Կալիֆոռնիա համալսարանի (USC) հայագիտական ուսումնասիրությունների ֆակուլտետն իր «Բովար» դահլիճում հասարակական ճնարկումներ է անցկացրել վերոնշյալ թեմայով: Հինգ անձնավորություններ (Վահե Բերբերյանը, Ասոմ Էգոյանը, Արսինե Խանջյանը, Էրիկ Նազարյանը եւ Սերժ Թանկյանը) եւ հինգ հաղարագեներ մասնակցել են ճնարկումներին՝ որոնք ընտրությունների եւ կառավարման, ինչպես նաեւ հասարակության կարիճներին արձագանելու հարցերի շուրջ են ոչ ոչվել:

«Գաղափարը ծագեց, երբ նշանավոր մարդկանց այդ խումբը նախաձեռնեց «change.org» խնդրագիրը, որը միաված է հայասանում արդարություն հասատելուն, անաչառ կառավարում ապահովելուն եւ թափանցիկ ընտրություններ անցկացնելուն», նշել է այդ առիթիվ ֆակուլտեսի տնօրեն Սալբի Ղազարյանը:

Քաղաքագեները Կանադայի, Վրաստանի եւ Մեխիկայի օրինակների վրա խոսել են ընտրությունների հաղատականության մասին, որոնց հետանկար ունենալով ապրիլյան առաջիկա ընտրությունները Հայաստանում:

«Մենք հավատացած ենք, որ Հայաստանը կարող է դառնալ հնարավորությունների, ստեղծագործ մտածողության, ժողովրդավարության եւ հույսի եզակի մի երկիր՝ վերիվայրումներով հարուստ իր տարածաշրջանում: Սա կարեւոր պահ է մեր կյանքում, եւ մենք այլընտրանք չունենք», խոսոտվանել են մասնակիցները, որոնք հույս են հայտնել, որ իրենց դիվանագիտությունը արդյունավետ կլինի:

Ն. Ծ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ագրարային ոլորտի զարգացման բաժնի գործունեությունը եւ հեռանկարները

⇨11

Գյուղատնտեսական հումքի արտադրողների եւ վերամշակողների միջեւ պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների ոչմասավորման համար անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ՝ հումքի մթերման կանխատեսվող ծավալների եւ անհրաժեշտ շրջանառու միջոցների պահանջարկի վերաբերյալ: Արտադրողների ու վերամշակողների պայմանագրերը կնքել ոչ թե մեկ կամ երկու, այլ 4-5 տարիների համար եւ միաժամանակ անհրաժեշտ է խթանել վերամշակող կազմակերպություններին ֆինանսական աջակցությամբ, որպեսզի նրանք կարողանան ոչ միայն ժամանակին վճարել գնված հումքի ոչժեքը, այլեւ կանխավճարային տեսքով ապահովել ապագա գնումները: Երկարաժամկետ պայմանագրերը հիմք կհանդիսանան խորացնելու արտադրության մասնագիտացումը եւ հետեւաբար զարգացնելու արտադրության համակենտրոնացումն ու իրական պայմաններ ստեղծելու հետանկարային ծրագրերի մշակման համար:

Անհրաժեշտ է խթանել արտահանման կողմնորոշում ունեցող արտադրանքների ավելացումը՝ բարձրորակ ալկոհոլային խմիչքների, հյութերի խտանյութի արտադրության գծով, իսկ սնունդ վերամշակող հայկական ընկերությունների համար ստեղծել բավարար խթաններ մասնելի վարկերի տրամադրմամբ, որպեսզի հումքի արտադրողների միջեւ ստեղծվի սերտ համագործակցություն: Միաժամանակ ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորել ֆերմերային շուկայական գնի եւ նվազագույն սահմանված գնի միջեւ եղած տարբերության չափով: Եվ որպես օտացույց Երեւանի Կոնյակի գործարանի օրինակով նպաստել վերամշակողների եւ արտադրողների միջեւ կնքվող պայմանագրերի կատարելագործմանը:

Այսոիսով, հիմնվելով վերոնշյալ առաջարկությունների վրա, պետք է հավասել, որ նպատակային եւ լավ վերահսկվող պետական աջակցության մեխանիզմները կարող են փոխել իրադրությունը եւ բարձրացնել տեղական վերամշակողների կենսունակությունն ու մրցունակությունը: Այնուհետ շատ կարեւոր է ՀՀ կառավարության դերը տեղեկատվության տեխնոլոգիաների առավել մասչելի դարձնելու եւ բիզնեսի վերաբերյալ իմացության եւ գործընկերության անհրաժեշտ ուղղություններ տրամադրելու հարցերում:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԻ
Հրատարակության Իե տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕրԱԹԵՐԻ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՍԿՈՓ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտադրումները տրպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռարձակատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունի մասին օրէնի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

Լրատուական գործունէութիւնը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 2.2.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: